ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 2-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, եւ զանօրէնութիւնս քո՝ գթովք տնանկաց» (Դան. Դ 24) բնաբանով (տե՛ս էջ 40):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 8-ին, շաբաթ.- Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հուլիսի 16-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Հոգեգալստեան: Գիւտ տուիոյ Սուրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից զքեզ պսակեաց խաչիւն իւրով» (Շարական) բնաբանով:

Սրբազան արարողության ընթացքում տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հինգ շրջանավարտ սաների սարկավագական ձեռնադրությունը:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 30-ին, կիրակի.- ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ 17) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 31-ին, երկուշաբթի.- Բ. օր Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Գալուստ վրդ. Գաբրիելյանը:

Ս. Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն համորեն ննջեցելոց:

ՈՒՂՂՈՒՄ

«Էջմիածին» ամսագրի 2000 թվականի հունվարի (էջ 83) և մարտի (էջ 45) համարներում Հոգեշնորհ Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանի խոսած քարոզների բնաբանները համապատասխանաբար ընթերցել. «Եւ ես ուխտեմ զձեզ, որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ, զարքայութիւն» (Ղուկ. ԻԲ 29) և «Տուր զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ ես կարես լինել տնտես» (Ղուկ. ԺՁ 2):

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ